

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3 մայիսի 2015թ.

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մույն ուղեցույցի հիմքում դրվել են ԼՂՀ ընտրական օրենսգիրքը և ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները , որոնք տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (cecncr.am):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ.

Քվեարկության օրը դուք աշխատելու եք բազմաթիվ ընտրողների հետ: Դա լուրջ պատասխանատվություն է, միննույն ժամանակ՝ պատիվ:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ նաև ընտրող է և ունի իր հայացքները, անձնական ու կուսակցական նախապատվությունները: Քվեարկության օրը մոռացե՛ք դրանց մասին, բացառությամբ այն պահի, երբ ինքներդ եք քվեարկելու: Ձեր ցանկացած քայլ, գործողություն կամ դիրքորոշում՝ կապված ձեզ վստահված տեղամասային կենտրոնում քվեարկության անցկացման և քվեարկության արդյունքների ամփոփման հետ, պետք է բխի՝

արդարության և օրինականության, անաչառության և չեզոքության, կարգապահության և բարեխղճության, ազնվության և գործողությունների թափանցիկության սկզբունքներից:

Հանձնաժողովի անդամի պարտականությունների կատարման ողջ ընթացքում ցուցաբերե՛ք հարգանք միմյանց և ընտրողների, տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող մյուս անձանց նկատմամբ, առաջնորդվե՛ք միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

Կարծում ենք, որ սույն գրքույկը՝ որպես ուսումնական ձեռնարկ և ընթացակարգային ուղեցույց, օգտական կլինի տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները ԼՂՀ ընտրական օրենսգրքին և ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին համապատասխան կազմակերպելու համար:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), տարածքային ընտրական հանձնաժողովներ (այսուհետ՝ ՏարԸՀ) և տեղամասային ընտրական հանձնաժողովներ (այսուհետ՝ ՏԸՀ):

Ընտրական գործընթացում ներգրավված մարմիններից ՏԸՀ-ն ընտրողներին ամենամոտ կանգնած՝ նրանց հետ անմիջականորեն շփվող օղակն է: ՏԸՀ անդամների կատարած աշխատանքի մակարդակով է մեծապես պայմանավորված ընտրողների վստահությունն ընտրությունների նկատմամբ:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը

Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

ՏԸՀ-ի անդամներին նշանակում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ ՏարԸՀ մեկ անդամ ՏԸՀ մեկ անդամ սկզբունքով, մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած անձանց թվից:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության կարգը

ՏԸՀ-ի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարն ընտրվում են ՏԸՀ-ի առաջին նիստում: ՏԸՀ-ի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրում է ՏարԸՀ-ի նախագահը՝ հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում: ՏԸՀ-ի առաջին նիստը վարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

ՏԸՀ նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության նիստն հրավազոր է, եթե նիստին ներկա են ՏԸՀ-ի անդամների կեսից ավելին:

Եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում, եթե ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին:

Եթե հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկից ավելի թեկնածու, ապա ընտրված է համարվում քվեարկության մասնակիցների առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը նախատեսված ժամկետում հանձնաժողովի նախագահ չի ընտրում, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահին նշանակում է ՏարԸՀ-ի նախագահը՝ եռօրյա ժամկետում համապատասխան հանձնաժողովի կազմից:

Նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրությունը կատարվում է նախագահի ընտրության համար նախատեսված կարգով:

ՏՀՀ-ի լիազորությունները դադարեցվում են քվեարկության օրվանից 5 օր հետո, իսկ վերաքվեարկություն անցկացվելու դեպքում՝ վերաքվեարկության օրվանից 5 օր հետո:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, ովքեր անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայական՝ երեք տարվա ժամկետով:



Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կարգավիճակը

ՏՀՀ-ի անդամները՝

- իրավունք ունեն նախապես ծանոթանալ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին, ելույթներ ունենալ հանձնաժողովի նիստերում, ներկայացնել առաջարկություններ և պահանջել, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն, նիստի մասնակիցներին տալ հարցեր և ստանալ սպառիչ պատասխաններ.

- պարտավոր են մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները.

- պարտավոր են մասնակցել քվեարկությանը՝ քվեարկել կողմ կամ դեմ.

- պարտավոր են կատարել հանձնաժողովի նախագահի կողմից իր իրավասության սահմաններում տրված հանձնարարությունները.

- իրենց լիազորությունների ժամանակահատվածում կարող են ազատվել, իսկ ընտրական հանձնաժողովի պահանջով՝ անհապաղ ազատվում են արտադրական կամ ծառայողական պարտականություններ կատարելուց, այդ ընթացքում նրանց աշխատավարձը հիմնական աշխատավայրում պահպանվում է:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին պաշտոնանկ անելու և հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու կարգը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ կարող են պաշտոնանկ արվել միայն, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցուցաբերում են ակնհայտ անգործություն, որի հետևանքով կարող է վտանգվել քվեարկության նախապատրաստումը կամ քվեարկության բնականոն ընթացքը կամ քվեարկության արդյունքների ամփոփումը: Այդ դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ կամ հանձնաժողովի քարտուղար նշանակում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի այլ անդամներից:

Ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

- 1) եթե չունի հանձնաժողովում նշանակվելու իրավունք.

- 2) եթե դատապարտվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքի 147-158-րդ հոդվածներով, կամ նրա նկատմամբ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում.

- 3) եթե ներկայացրել է հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում: Այդ դիմումը հանձնաժողովի անդամը ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին.

4) եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը կամ հանձնաժողովի քարտուղարը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում: Նման դիմում կարող է ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ մինչև ժամը 18.00-ն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:

5) եթե գորակոչվել է.

6) եթե նա մահացել է.

7) ընտրական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

1-6-րդ կետերով նախատեսված դեպքերում լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստը արձանագրում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

ՏՀՀ-ի գործունեությունն իրականացվում է կոլեգիալության սկզբունքով՝ նիստերի միջոցով: ՏՀՀ նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին, բացառությամբ համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ ընկած ժամանակահատվածում կայացող հերթական նիստերի:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

ՏՀՀ-ի հերթական նիստերը սահմանված են ընտրական օրենսգրքով.

• ՏՀՀ-ի առաջին նիստը, որը կայանում է ՏՀՀ-ի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, վարում է ՏՀՀ-ի տարիքով ավագ անդամը,

• քվեարկության նախորդ օրը ՏՀՀ-ի նիստը, որում վիճակահանությամբ որոշված քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի անդամները մինչև ժամը 24.00-ն, ՏՀՀ-ի սահմանած կարգով, պարտավոր են ստորագրել բոլոր քվեաթերթիկները,

• քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին ՏՀՀ-ի նիստը, որում վիճակահանությամբ որոշվում են ՏՀՀ-ի անդամների գործառույթները և անհրաժեշտության դեպքում այդ գործառույթների հերթափոխը,

• քվեարկության ավարտից հետո՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:

Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ նախագահի տեղակալը:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել հանձնաժողովի նիստերին, քվեարկել կողմ կամ դեմ, կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները:

Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամների մասնակցության մասին նշվում է հանձնաժողովի գրանցամատյանում: Այդ գրառման տակ ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հանձնաժողովի նիստում որոշումներ ընդունելու կարգը

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի իրավագոր նիստում բաց քվեարկությամբ:

Քվեարկությունը համարվում է կայացած, եթե քվեարկությանը մասնակցել է հանձնաժողովի անդամների **ընդհանուր թվի կեսից ավելին**:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել քվեարկությանը:

Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են հանձնաժողովի անդամների **ընդհանուր թվի կեսից ավելին**:

Համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ, որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին կողմ քվեարկած հանձնաժողովի անդամների թիվը մեծ է դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների թվից:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները

Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

- կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում.
- կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, արձանագրության օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում.
- հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակները, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը և քվեատուփը ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողով.
- իրականացնում է ԼՂՀ ընտրական օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:



Մկզբունքներ և կանոններ, որոնցով պետք է առաջնորդվի ՏՀՀ անդամը

- Հարգել օրենքը, հետևել նրա տառին.
- Լինել անաչառ, չեզոք, անկողմնակալ, անկախ, զուսպ, քաղաքավարի.
- Հատուկ հարգալից վերաբերմունք ունենալ ԼՂՀ պետական խորհրդանիշների, ընտրողների, ընտրության բոլոր մասնակիցների (ղիտորդներ, ՁԼՄ ներկայացուցիչներ, վստահված անձինք և այլոք) նկատմամբ.
- Ուշադրություն դարձնել սեփական արտաքին տեսքին ու վարվելակերպին, վերնագգեստի վրա կրել համապատասխան վկայական:



Վստահված անձինք, ղիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները

Ընտրությունների թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովելու նպատակով, ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական գործընթացի մասնակիցներ են նաև վստահված անձինք, ղիտորդները և զանգվածային լրատվության միջոցների (ՁԼՄ) ներկայացուցիչները, որոնց իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանված են ընտրական օրենսգրքով:

Վստահված անձինք ներկայացնում են թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների շահերը:

Վստահված անձն իրավունք ունի խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին: Մա նշանակում է, որ հանձնաժողովի նիստերի ժամանակ վստահված անձը՝ նիստը վարողի թույլտվությամբ, կարող է մասնակցել համապատասխան հարցի քննարկանք, էլոյթներ ունենալ, հարցեր տալ, առաջարկություններ կատարել:

Վստահված անձը նաև իրավունք ունի՝

- ➡ ծանոթանալու ընտրական փաստաթղթերին, այդ թվում՝ դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի տված համապատասխան տեղեկանքին.

➤ ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները, կատարելու քաղվածքներ.

➤ բողոքարկելու հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը.

➤ ԿԸՀ-ի կողմից սահմանված կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.

➤ չմիջամտելով հանձնաժողովի անդամի աշխատանքներին, ֆիզիկապես ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեաթերթիկ հատկացնող, քվեաթերթիկ կնքող անդամների, քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին.

➤ քվեարկության օրը հետևել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնել դիտարկումներ և առաջարկություններ.

➤ քվեարկության արդյունքները ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա գտնվելու քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը.

➤ անարգել տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը:

Դիտորդներ կարող են լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները:

Դիտորդը, ՁԼՄ ներկայացուցիչն իրավունք ունեն՝

➤ ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում: ԿԸՀ-ի սահմանած կարգով հետևել քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.

➤ անարգել ծանոթանալ տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ.

➤ ազատ տեղաշարժվել տեղամասային կենտրոնում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.

➤ անարգել տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը:

ՏԸՀ նախագահը, ընտրական հանձնաժողովների նիստերի և քվեարկության ընթացքում վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար ապահովում է աշխատանքային անհրաժեշտ և հավասար պայմաններ:

Վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում:

Հ Ի Շ ԵՔ

Ոչ ոք, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները, իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

Վստահված անձր, դիտորդը և լրագրողը պետք է ունենան սահմանված նմուշի վկայական և անձը հաստատող փաստաթուղթ:



Ընտրական փաստաթղթեր և քվեարկության անցկացման համար անհրաժեշտ նյութեր

Ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու համար ՏԸՀ-ին տրամադրվում են ընտրական փաստաթղթեր, գրենական պիտույքներ և այլ նյութեր:

ՏԸՀ նախագահը պատասխանատվություն է կրում դրանց ստացման, տեղափոխման և պահպանության համար:

ՏԸՀ-ն իր ստեղծումից հետո ՏարԸՀ-ից ստանում է՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգիրքը,
- ուղեցույց,
- ՏԸՀ-ի անդամների վկայականները,
- համարակալված էջերով և վերադաս հանձնաժողովի կողմից կնիքված ՏԸՀ-ի գրանցամատյանը,
- տեղամասային կենտրոնի ցուցանակը (եթե այդպիսին նախօրոք չի ստացվել),
- չհրկիզվող պահարան (եթե տեղամասային կենտրոնում այդպիսին չկա),
- քվեախցիկ՝ յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվով առնվազն մեկ հատ,
- գրենական պիտույքներ:

Քվեարկության օրվանից երկու օր առաջ ՏԸՀ-ի նախագահը ընտրողների ռեզիստրը վարող լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարից ստանում է՝

- ընտրողների ցուցակը (երկու օրինակից),
- ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթեր,
- տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները,
- առկայության դեպքում լրացուցիչ ցուցակներ՝ համամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող ընտրողների համար (գործուղման մեջ գտնվող ոստիկանության աշխատակիցների լրացուցիչ ցուցակ, բուժհիմնարկներում ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակ, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակ):

Քվեարկության նախորդ օրը ՏԸՀ-ը ՏարԸՀ-ից ստանում է՝

- քվեաթերթիկներ (տեղամասում ընտրողների թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս 2 քվեաթերթիկից),
- ՏԸՀ-ի կնիքը (փաթեթավորված և կնքված),

ՈՒՇԱԴՐ ՈՒԹՅՈՒՆ մինչև քվեարկության օրը կնիքի փաթեթը բացելն արգելվում է և հանգեցնում պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով.

- կնիքի համար բարձիկ,
- քվեաթերթիկների նմուշներ՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար,
- քվեատուփ կամ քվեատուփեր՝ միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում,
- քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները (յուրաքանչյուր ընտրությունների համար առնվազն 4-ական օրինակ) և քաղվածքի ձևեր,
- փաթեթներ (ծրարներ) հետևյալ փաստաթղթերը փաթեթավորելու համար.
 1. ընտրողների ցուցակները,
 2. մարված քվեաթերթիկները,
 3. անվավեր քվեաթերթիկները,
 4. յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկները,
 5. կապիչներ քվեատուփերը կապելու համար:



Ի՞նչ հարցեր են լուծում SCՀ-ները կազմավորումից մինչև քվեարկության նախորդ օրը

Քվեարկության օրը դուք աշխատելու եք բավական երկար և համատեղ, կատարելու եք պատասխանատու աշխատանք, ուստի խիստ կարևոր է առաջին իսկ օրվանից համապատասխան աշխատանքային մթնոլորտի ձևավորումը:

- Ծանոթացեք ընտրական օրենսգրքին և ԿՐՀ-ի որոշումներին:
- Մասնակցեք բոլոր նիստերին և դասընթացներին:
- Ուսումնասիրեք գրանցամատյանը և ծանոթացեք դրա լրացման կարգին:
- Համատեղ քննարկեք հնարավոր իրավիճակներ և փորձեք գտնել լուծումներ:
- Ձեզ մոտ նշեք տեղամասային կենտրոնի, SCՀ-ի նախագահի (անդամների), ինչպես նաև վերադաս հանձնաժողովների հեռախոսահամարները:

SCՀ-ի առաջին նիստից հետո հանդիպեք տեղամասային կենտրոնի շենքը տնօրինող հաստատության ղեկավարին և նրա հետ

- պարզեք, թե որ տարածքն է ավելի հարմար քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման աշխատանքներն իրականացնելու համար.
- ստուգեք հեռախոսի, չհրկիզվող պահարանի, բավարար քանակով սեղանների, աթոռների և անհրաժեշտ այլ պարագաների առկայությունը.
- հավաստիացեք, որ պատշաճ ձևով փակցված են ընտրողների ցուցակները.
- պայմանավորվեք, որ քվեարկության օրը քվեարկության համար նախատեսված տարածքի դուռը բացեն **ժամը 6:30-ին**, որպեսզի քվեարկությունը նախապատրաստելու համար ժամանակ ունենաք:


SCՀ-ի նախագահը պետք է.

- համոզվի, որ քվեարկության օրը SCՀ բոլոր անդամները կլինեն տեղամասային կենտրոնում.
- ՏարԿՀ-ից ստանա քվեարկության համար անհրաժեշտ նյութերն ու պարագաները և քվեարկությունից **առնվազն 24 ժամ առաջ** ապահովի քվեարկության սենյակի վերջնական կահավորումը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Քվեարկության սենյակի կահավորման հետ կապված խնդիրներով դիմեք համայնքի ղեկավարին: Համաձայն ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տեղամասային կենտրոնում քվեարկության բնականոն ընթացքն ապահովող անհրաժեշտ կահավորման համար պատասխանատու է համապատասխան համայնքի ղեկավարը:

Քվեարկության սենյակի գծագիրը



Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորության վրա:

Քվեարկության խցիկները տեղամասային կենտրոնում տեղադրվում են սեղանների վրա այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս գտնվի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը:

Եթե քվեարկության խցիկը ամրացված է պատին, ապա 2 մետր հեռավորության վրա, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1.5 մետր հեռավորության վրա, սահմանվում է համապատասխան գոտի՝ արգելափակիչ ժապավենով, որն ունի մեկ մուտք և մեկ ելք: Այդ գոտում քվեարկության խցիկների քանակից ավելի թվով ընտրողների գտնվելն արգելվում է:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի

Գործողությունները քվեարկության նախորդ օրը

Քվեարկության նախորդ օրը ՏՀՀ-ի նախագահը ՏարՀՀ-ից պետք է ստանա ՏՀՀ կնիքի փաթեթը, քվեաթերթիկներ, քվեատուփեր, արձանագրությունների ձևեր և քվեարկությունն անցկացնելու համար անհրաժեշտ այլ պարագաներ: Նախապես տեղեկացեք ստանալու ժամի և վայրի մասին, որպեսզի կարողանաք ներկա գտնվել:

ՏարՀՀ-ից քվեաթերթիկները տեղամասային կենտրոն բերելուց հետո հանձնաժողովի նիստում վիճակահանությամբ որոշեք քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի 3 անդամներին, ովքեր պարտավոր են սահմանված կարգով մինչև **ժամը 24:00** ստորագրել բոլոր քվեաթերթիկների հակառակ կողմում:

Այդ վիճակահանությանը մասնակցում են ՏՀՀ-ի բոլոր անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը:
Գրանցամատյանում կատարեք գրառում այդ մասին:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Գրանցամատյանում կատարվող գրառումների համար նախատեսված են համապատասխան բաժիններ, էջեր և ձևաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս հեշտությամբ կատարել համապատասխան գրառումներ:*

Քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի անդամներին որոշելու համար ՏՀՀ-ն անցկացնում է վիճակահանություն, որի արդյունքում որոշվում են այն երեք անդամները, ովքեր պետք է ստորագրեն Ազգային ժողովի ընտրության քվեաթերթիկները:

Վիճակահանությունն անցկացնելու նպատակով հանձնաժողովի նախագահը նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվին համապատասխան պատրաստում է իրարից չտարբերվող թերթիկներ, որոնցից երեքի վրա նշում է «ստորագրություն» բառը:

Թերթիկները ծալվում են այնպես, որ չտարբերվեն միմյանցից և զցվում վիճակահանության համար նախատեսված արկղի մեջ: Ըստ հանձնաժողովի անդամների ազգանունների այբբենական հերթականության, հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ վիճակահանության արկղից հանում է մեկ թերթիկ: Համապատասխան նշումով թերթիկներ հանած հանձնաժողովի անդամները ստորագրում են բոլոր քվեաթերթիկները:

Երկու ձևի (մեծամասնական և համամասնական) քվեաթերթիկների դեպքում կարելի է անցկացնել 2 վիճակահանություն՝ ստորագրող 3-ական անդամներին որոշելու համար:

Համապատասխան նշումով թերթիկներ հանած հանձնաժողովի անդամները ստորագրում են տվյալ ընտրակարգով ընտրության համար նախատեսված թերթիկները:



Գործողությունների քայլերի հաջորդականությունը



Քվեաթերթիկները հաշվելուց հետո հանձնաժողովի՝ վիճակահանությամբ որոշված անդամները պետք է ստորագրեն ՏՀՀ-ին հատկացված բոլոր քվեաթերթիկները: Ստորագրությունները դրվում են քվեաթերթիկների հակառակ կողմում այնպես, որ քվեաթերթիկները սահմանված կարգով մարելու ժամանակ ստորագրությունների ամբողջականությունը պահպանվի:

➤ Գրանցամատյանում արձանագրեք տպագրական խոտանի պատճառով քվեաթերթիկների թիվը:

➤ Քվեաթերթիկների կապերը, ընտրողների ցուցակները և կնիքի փաթեթը տեղադրեք չհրկիզվող պահարանում:

➤ Թղթով սոսնձեք չհրկիզվող պահարանը: Սոսնձված թղթի վրա պետք է ստորագրեն հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը: Ցանկության դեպքում հանձնաժողովի մյուս անդամներն ու վստահված անձինք նույնպես կարող են ստորագրել:

➤ Չհրկիզվող պահարանը հանձնեք պահպանության ոստիկանության աշխատակցին՝ գրանցամատյանում կազմելով հանձնման-ընդունման մասին համապատասխան արձանագրություն՝ ըստ նշված ձևի:



Խորհուրդ է տրվում գործավարության մատյանն ի պահ հանձնել ոստիկանության աշխատակցին:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության օրը

Ժամը 7:00

ՏՀՀ անդամները ներկայանում են տեղամասային կենտրոն, սկսվում է ՏՀՀ նիստը:



ՈՒ Շ Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Եթե քվեարկության օրը ՏՀՀ ոչ բոլոր անդամներն են ներկայացել տեղամասային կենտրոն և անդամների թիվը պակաս է 2/3-ից, ապա ՏՀՀ նախագահը (կամ տեղակալը) այդ մասին անհապաղ տեղեկացնում է ՏարՀՀ նախագահին:*

ՏՀՀ-ի նախագահը, ստուգելով հատուկ չհրկիզվող պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը, ոստիկանության աշխատակիցներից ընդունում է պահարանը, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխումը:

Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում:

Վիճակահանությունն իրականացվում է հետևյալ կերպ՝

1. ՏՀՀ-ի նախագահը նիստին ներկա անդամների թվին համապատասխան պատրաստում է միանման թերթիկներ, որոնց վրա գրված է.

- **«Ընտրողների գրանցումն իրականացնող»** մեկ թերթիկ մինչև 750 ընտրող ունեցող տեղամասերում, երկու թերթիկ 750-ից ավելի ընտրող ունեցող տեղամասերում, 2 հատ թերթիկի դեպքում նշվում է նաև «ցուցակ 1», «ցուցակ 2» բառերը,

- **«Քվեաթերթիկ հատկացնող»** մեկ թերթիկ մինչև 750 ընտրող ունեցող տեղամասերում, երկու թերթիկ 750-ից ավելի ընտրող ունեցող տեղամասերում,

- **«Քվեաթերթիկ կնքող»** մեկ թերթիկ,

- **«Քվեատուփի համար պատասխանատու»** մեկ թերթիկ,

- **«Շրջիկ արկղի համար պատասխանատու»** մեկ թերթիկ, եթե ՏՀՀ է ներկայացվել ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակ (անհրաժեշտության դեպքում):

2. Թերթիկները՝ նաև նշում չպարունակող, քառապատիկ ծալում և գցում է վիճակահանության արկղի մեջ:

3. Հանձնաժողովի անդամներն այբբենական հերթականությամբ հանում են մեկական թերթիկ և բարձրաձայն կարդում գրվածը, ըստ անցկացվող վիճակահանությունների անհրաժեշտության ձևավորվում է յուրաքանչյուր հերթափոխը:

4. Անցկացված վիճակահանությունների մասին գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

Հանձնաժողովի նախագահը վիճակահանությունների արդյունքներին համապատասխան, ըստ անհրաժեշտության, ապահովում է հանձնաժողովի անդամների հերթափոխը:



Տեղամասային կենտրոնի բացումը

🕒 Մինչև ժամը 8:00-ն

ՏՀՀ-ի նախագահը (կամ նախագահի տեղակալը) քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

- բացում է չհրկիզվող պահարանը, հանում է քվեաթերթիկները, փաթեթավորված կնիքը (ներկաները կարող են ստուգել կնիքի փաթեթի ամբողջական և կնքված լինելը).
- բացում է փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում կնիքի համարը.
- ստուգում է քվեատուփի (քվեատուփերի) դատարկ լինելը, իսկ քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք հավաստիանում են դրանում.
- կապիչով փակում և կնքում է քվեատուփը (քվեատուփերը).
- ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի, տների հասցեները և կնիքը հանձնում է քվեաթերթիկ կնքող անդամին.
- ընտրողների ցուցակները հանձնում է գրանցման համար պատասխանատու անդամ(ներ)ին.
- քվեաթերթիկները հարյուրական փաթեթներով հանձնում է քվեաթերթիկներ հատկացնող անդամ(ներ)ին:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին ՏՀՀ-ի նախագահը համապատասխան գրառում է կատարում գործավարության մատյանում :

🕒 Ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված: Այդ պահից թույլատրվում է ընտրողների մուտքը տեղամասային կենտրոն և սկսվում է քվեարկությունը:



ՈՒ Շ Ա Ղ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *ՏՀՀ նիստերին, քվեարկության ընթացքում և քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում տեղամասային կենտրոնում կարող են գտնվել*

- վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները
- վստահված անձինք (յուրաքանչյուր կուսակցության, թեկնածուի մեկ վստահված անձ)
- տեղական դիտորդները (յուրաքանչյուր հասարակական կազմակերպությունից մեկ դիտորդ)

- միջազգային դիտորդները (երկու դիտորդ և մեկ թարգմանիչ)
- ՁԼՄ-ների ներկայացուցիչները

ՏԸՀ-ի անդամները, վստահված անձինք, դիտորդները և լրագրողները պետք է կրեն ԿԸՀ-ի սահմանած նմուշի համապատասխան վկայականներ:



Տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու, ընտրողների ազատ կամաարտահայտման վրա կողմնակի ազդեցությունները հնարավորինս բացառելու և քվեարկության կարգի պահպանման համապատասխան մթնոլորտ ստեղծելու համար էական նշանակություն ունի տեղամասային կենտրոն մուտքի և ելքի կարգավորումը:

Արգելվում է տեղամասային կենտրոն զենքով, զինամթերքով մուտք գործելը՝ բացառությամբ ընտրությունների բնականոն ընթացքի վտանգման դեպքերի: Այդ դեպքերում տեղամասային կենտրոն զենքով, զինամթերքով մուտք գործելը թույլատրում է ՏԸՀ նախագահը կամ տեղակալը:

Քվեարկության սենյակում կուտակումներից ու խառնաշփոթից խուսափելու նպատակով ՏԸՀ նախագահը պետք է հսկի և պարբերաբար ստուգի, թե քվեարկողներից բացի ովքեր են ներկա տեղամասային կենտրոնում, և արդյո՞ք բոլորն ունեն տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք:



Ինչպե՞ս վարվել, եթե տեղամասային կենտրոնում քվեարկողների թիվը 15-ից անցնում է

Նման պարագայում համաձայն ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՏԸՀ նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնել հերթականությամբ՝ մեկ-մեկ: Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի ընտրող:

Սակայն ՏԸՀ-ի նախագահը պետք է այնպես իրականացնի իր այդ լիազորությունը, որպեսզի մուտքի մոտ անհարկի հերթեր չառաջանան և տեղամասային կենտրոն եկած տվյալ տեղամասի յուրաքանչյուր ընտրող ներկայանա և մասնակցի քվեարկությանը:



Քվեարկությանը մասնակցելու իրավունքը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը 18 տարին լրացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները:

Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ:

Հ Ի Շ Ե Ք

Ընտրական հանձնաժողովներն իրավասու չեն որևէ մեկին ընդգրկելու ընտրողների ցուցակում, նույնիսկ տվյալ տեղամասի հաշվառման առկայության պարագայում:

Եթե անձը հաշվառված է ընտրական տեղամասի տարածքում, սակայն ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների վերջնական ցուցակում, ապա ՏՀՀ նախագահը քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի հիման վրա նրան առաջարկում է դիմել լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում կամ դատարան: Տվյալ անձը կարող է ընդգրկվել ընտրողների լրացուցիչ ցուցակում և մասնակցել քվեարկությանը լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման տեղեկանքի կամ դատարանի վճռի հիման վրա:



Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող նախ պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը՝

- ստուգում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը.
- ընտրողների ցուցակում գտնում է նրա ազգանունը, անունը, հայրանունը և հերթական համարը.
- լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները.
- ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց.
- միաժամանակ մեկից ավելի քվեարկություններ անցկացվելու դեպքում ընտրողը ստորագրում է յուրաքանչյուր քվեարկության համար նախատեսված առանձին սյունակում (տվյալ դեպքում՝ համամասնական և մեծամասնական),
- այդ տվյալների դիմաց նախատեսված սյունակում ստորագրում է նաև հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը:

Յուրաքանչյուր ընտրող գրանցվելիս պետք է ստորագրի ցուցակում իր անվան դիմաց՝ նախատեսված սյունակում:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նրա խնդրանքով կարող է նրան օգնել մեկ այլ քաղաքացի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ:



Ի՞նչ փաստաթղթերով կարելի է մասնակցել քվեարկությանը

- անձնագիր.
- անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ.
- զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը:

Պարտադիր ժամկետային զինծառայողները ծառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում իրենց մշտական բնակության վայրերում քվեարկում են զինվորական գրքույկներով՝ ներկայացնելով նաև ծառայությունից ժամանակավոր արձակված լինելու մասին փաստաթղթի պատճենը:



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Համաձայն ընտրական օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:*

Ընտրական ցուցակում տեղ գտած տառասխալը կամ վրիպակը, մնացած տվյալների համապատասխանության դեպքում, հիմք չեն ընտրողին քվեարկելուց զրկելու համար:

ՏԸՀ անդամը, այդ մասին տեղյակ պահելով ՏԸՀ նախագահին և վստահված անձանց, ընտրողների ցուցակի լրացուցիչ սյունակում նշում է ճշգրտված տվյալը և թույլատրում է ընտրողին մասնակցել քվեարկությանը:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Քվեաթերթիկի վրա եղած ավելորդ նշումները կարող են քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ, ուստի անհրաժեշտ է ուշադիր գննել և ավելորդ նշումներ հայտնաբերելու պարագայում սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկների համար սահմանված կարգով մարել դրանք՝ այդ մասին գրանցամատյանում կազմելով համապատասխան արձանագրություն:*



Քվեաթերթիկ ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին և ստանում քվեաթերթիկ(ներ)ը:

Քվեաթերթիկները կնքող հանձնաժողովի անդամը համոզվում է տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ, կնքում է քվեաթերթիկ(ներ)ը:

Միաժամանակ մի քանի ընտրություններ անցկացվելու դեպքում նույն գործողությունը կատարում է յուրաքանչյուր քվեաթերթիկի համար:



Քվեարկությունը

Ստանալով քվեաթերթիկները, ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

Ընտրողը քվեաթերթիկում V ձևի կամ նմանվող նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի դատարկ քառանկյունում, որին կողմ է քվեարկում:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում ընտրողը, եթե կողմ է քվեարկելու, նշում է կատարում «կողմ եմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ եմ» բառերի դիմաց:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացին իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի վստահված անձ կամ հանձնաժողովի անդամ: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Նույն անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ քաղաքացու: Գրանցամատյանում կատարվում է համապատասխան արձանագրություն:

Ընտրողը մոտենում է քվեատուփի համար պատասխանատու անդամին:

Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը իր նախաձեռնությամբ կամ վստահված անձի պահանջով կարող է համոզվել ընտրողի՝ տվյալ տեղամասում հաշվառված լինելու մեջ:

Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկը քվեատուփի մեջ զցելու համար:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել, ապա հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության*

դեպքում՝ տեղակալի հանձնարարությամբ նրան տրվում է նոր քվեաթերթիկ՝ ընտրողների ցուցակում նրա տվյալների դիմաց կատարելով համապատասխան նշում: Միայն լրացված (վնասված) քվեաթերթիկը մարվում է անհապաղ՝ քվեաթերթիկը ներքնի ձախ կամ աջ անկյունից կտրվում է այնպես, որ հանձնաժողովի անդամների ստորագրությունները չվնասվեն: Մարման մասին գրանցամատյանում կազմվում է համապատասխան արձանագրություն:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն Մահմանափակ ֆիզիկական հնարավորություններ, իչպես նաև քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների քվեարկությանը մասնակցելու կարգի համաձայն՝

1) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղեկանալով, որ տեղամասային կենտրոնի տեղակալման շենքի մոտ է գտնվում շարժասայլակով տեղաշարժվող ընտրող, տեղամասային կենտրոնում հայտարարում է այդ մասին, մոտենում է ընտրողին և նրան բացատրում քվեարկությանը մասնակցելու կարգը:

2) ընտրողի համաձայնության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վերցնում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, ստուգում նրա ինքնությունը և ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը տեղամասային կենտրոնում հանձնում ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին: Վերջինս ընտրողների ցուցակում լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Այդ տվյալների դիմաց ընտրողի համաձայնությամբ նրա փոխարեն ստորագրում է որևէ վստահված անձ կամ դիտորդ կամ ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացի: Ընտրողի գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողի ստորագրության դիմաց իր ստորագրությունը դնելուց հետո նույն տողի լրացուցիչ նշումների սյունակում լրացնում է «շարժասայլակ» բառը, որից հետո ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը վերադարձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

3) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ընտրողի փոխարեն ստանում է քվեաթերթիկ, որը կնքվում է քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի կողմից և տեղամասային կենտրոնի տեղակալման շենքի մոտ դրանք հանձնում ընտրողին՝ նրան հնարավորություն տալով գաղտնի քվեարկելու: Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը ծալում է քվեաթերթիկը և այն հանձնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

4) տեղամասային կենտրոնում քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը հնարավորություն է ընձեռում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին քվեաթերթիկը քվեատուփի մեջ գցելու համար: Քվեաթերթիկը քվեատուփի մեջ գցելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն անձը հաստատող փաստաթուղթը հանձնում է ընտրողին և անհապաղ վերադառնում տեղամասային կենտրոն: Տվյալ գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն իրականացնում է առնվազն 1 վստահված անձի կամ առնվազն 1 դիտորդի, կամ վստահված անձի ու դիտորդի, կամ ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացու ներկայությամբ (մասնակցությամբ) (ԼՂՀ ԿՀՀ 28.01.2015թ. N 1-Ն որոշում):



ԼՂՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները ծառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում հանվում են զորամասի ընտրողների ցուցակից և իրենց մշտական բնակության վայրերում կարող են ընդգրկվել ընտրողների ցուցակում՝ 7-օրյա ժամկետում ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնին հայտ ներկայացնելու դեպքում:

Քվեարկության փուլի առաջին կարևոր դրույթը ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի պահպանումն է:

Ընտրական օրենսգրքում ամրագրված է.

- Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:
- Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:
- Յուրաքանչյուր ընտրող յուրաքանչյուր քվեարկության համար ստանում է մեկ քվեաթերթիկ (քվեաթերթիկներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացնելու դեպքում):

Քվեարկության փուլի երկրորդ կարևոր դրույթը քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանումն է:

Ընտրական օրենսգրքում ամրագրված է.

- Ընտրություններում քվեարկությունը գաղտնի է:
- Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:
- Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է և հետապնդվում օրենքով:

Քվեարկության ընթացքում ՏՀՀ նախագահը՝

- ժամը 8.00-ին հայտարարում է ընտրական տեղամասը բացվելու և քվեարկությունը սկսվելու մասին.
- մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը տվյալներ է հաղորդում ՏարՀՀ՝ համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին.
- պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.
- կարգավորում է ընտրողների հոսքը տեղամասային կենտրոն.
- ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին.
- վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը (անհրաժեշտության դեպքում).
- ընդունում է ներկայացված առաջարկությունները, դիտողությունները և բողոքները, անհրաժեշտության դեպքում ձեռնարկում միջոցներ.
- բացառությունների և թյուրիմացությունների դեպքում կարգավորում է իրավիճակը.
- կազմակերպում է ՏՀՀ անդամների ընդմիջումն այնպես, որ չխաթարվի հանձնաժողովի աշխատանքը.
- պահպանում է համագործակցությունը ՏՀՀ բոլոր անդամների, վստահված անձանց և դիտորդների միջև:

ՏՀ նախագահի տեղակալը՝

• անհրաժեշտության դեպքում փոխարինում է նախագահին և կատարում իր և նախագահի լիազորությունների շրջանակներում նրա կողմից տրված հանձնարարությունները:

ՏՀ քարտուղարը՝

• գրանցում է տեղամասային կենտրոն վստահված անձանց, դիտորդների և լրագրողների ներկայանալու և դուրս գալու ժամանակը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրառումներ կատարում գրանցամատյանում:

Տեղամասային կենտրոնի փակումը

Տեղամասային կենտրոնի փակման համար նշանակված ժամից մոտավորապես 15 րոպե առաջ ընտրողներին հայտարարեք, որ շուտով տեղամասային կենտրոնը փակվելու է:

 **Ժամը 20:00**

ՏՀ նախագահը՝

- արգելում է ընտրողների մուտքը տեղամասային կենտրոն.
- տեղամասային կենտրոնում գտնվող չքվեարկած ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.
- փակում է քվեատուփի ճեղքը.
- դուրս է հրավիրում ՏՀ նիստին ներկա գտնվելու իրավունք չունեցող բոլոր անձանց.
- փակում տեղամասային կենտրոնը:

ՏՀ-ն սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:



Քվեարկության արդյունքների ամփոփումը

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է հենց քվեարկության սենյակում: Նախ՝ տեսակավորում և հաշվարկում են համամասնական ընտրակարգով քվեաթերթիկները, ամփոփվում և արձանագրվում են համամասնական ընտրության արդյունքները, այնուհետև նույն ձևով՝ մեծամասնականը:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը վստահված անձանց, դիտորդների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների կողմից կարող է անարգել տեսանկարահանվել, լուսանկարվել:*

Միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում ՏՀ-ում քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ քվեատուփը բացելուց հետո ՏՀ-ի նիստի աշխատանքներին շարունակում են մասնակցել համապատասխան ընտրության համար գրանցված թեկնածուների վստահված անձինք և դիտորդները: Մյուս ընտրության համար գրանցված թեկնածուների վստահված անձինք և դիտորդները մնում են ՏՀ-ում, սակայն չեն իրականացնում ԼԴՀ ընտրական օրենսգրքով իրենց վերապահված իրավունքները մինչև այդ ընտրության քվեարկության արդյունքների ամփոփման աշխատանքների վերսկսվելը:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում անհրաժեշտ է խստորեն պահպանել ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված գործողությունների հաջորդականությունը:*

1. Հաշվարկվում են չօգտագործված քվեաթերթիկները: Այդ թվին ավելացվում են նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված քվեաթերթիկները: Ստացված թիվը լրացվում է գրանցամատյանում: Չօգտագործված քվեաթերթիկները մարվում են կտրելով ներքևի աջ կամ ձախ անկյունը: Մարված քվեաթերթիկները դրվում են փաթեթի մեջ, փաթեթի վրա գրվում է «մարված քվեաթերթիկներ» բառերը:

2. Հաշվարկվում է ընտրողների յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին-առանձին, ավելացնելով ընտրական ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը՝ ստանում է ընտրական տեղամասի ընտրողների ընդհանուր թիվը:

3. Ընտրողների ցուցակներում, այդ թվում՝ բոլոր լրացուցիչ ցուցակներում առկա ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվարկվում է քվեարկության մասնակիցների թիվը և այն լրացվում գրանցամատյանում: Ընտրողների ցուցակները և բոլոր լրացուցիչ ցուցակներն ու դրանց կազմման համար հիմք հանդիսացող ուստիկանության տեղեկանքներն ու դատարանի վճիռները փաթեթավորվում են մեկ փաթեթում, փաթեթի վրա գրվում է «ընտրողների ցուցակներ» բառերը:

• Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ընտրողների ցուցակների փաթեթը տեղադրվում է համամասնական ընտրակարգով ընտրական փաստաթղթերի հետ:

Փաստաթղթերի փաթեթները կնքվում են և ստորագրվում հանձնաժողովի երեք անդամի կողմից: Ցանկության դեպքում փաթեթների վրա կարող են ստորագրել նաև հանձնաժողովի մյուս անդամները և (կամ) վստահված անձինք, որի մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

Հ Ի Շ Ե Ք

Թվարկված բոլոր գործողությունների արդյունքում հաշվարկված թվերը հրապարակվում և արձանագրվում են ՏՀՀ գրանցամատյանում:



Քվեաթերթիկների տեսակավորումը

Քանի որ մեծամասնական և համամասնական ընտրակարգով ընտրությունները համարվում են միևնույն կարգի՝ Ազգային ժողովի ընտրություններ, ուստի մեծամասնական և համամասնական քվեարկված քվեաթերթիկները ընտրողների կողմից մտցվում են միևնույն քվեատուփի մեջ:


Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝

Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկ քվեաթերթիկ, բարձրաձայն հայտարարում է քվեաթերթիկի տեսակի մասին (համամասնական և մեծամասնական, դրանք տարբերվում են միմյանցից իրենց գույնով), եթե քվեաթերթիկը պատկանում է մեծամասնական ընտրությանը, ապա այն դրվում է առանձին, իսկ եթե քվեաթերթիկը պատկանում է համամասնական ընտրությանը, ապա հանձնաժողովի նախագահի կողմից բարձրաձայն հայտարարվում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարվում է նաև, թե ինչպես է քվեարկված: Իր հայտարարության համաձայն՝ ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկը դնում է համապատասխան կուսակցության օգտին, մեկ կուսակցություն քվեարկվելու դեպքում՝ կուսակցության կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ քվեաթերթիկը: Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում (կամ քվեատուփերում) առկա բոլոր քվեաթերթիկների համար, որից հետո հաշվարկվում են մեծամասնական ընտրությանը պատկանող բոլոր քվեաթերթիկները:

Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

- 1) մեկից ավելի թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին նշումներ է ներառում.
 - 2) մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է ներառում.
 - 3) որևէ նշում չի ներառում.
 - 4) բացի քվեարկության համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած **V**-աձև կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ նշում.
 - 5) ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ կնքված չէ.
 - 6) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված **V** ձևը: Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:
- Քվեաթերթիկը վավեր է, եթե այն անվավեր չէ:*



Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Վստահված անձն իրավունք ունի ՏՀՀ նախագահի, տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ինչպես նաև ներկա գտնվելու քվեաթերթիկների հաշվարկմանն ու քվեարկության արդյունքների ամփոփմանը:*

Հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները փաթեթավորվում են, իսկ փաթեթները՝ կնքվում: Փաթեթների վրա անպայման պետք է առկա լինեն հանձնաժողովի երեք անդամների ստորագրությունները, ցանկության դեպքում փաթեթների վրա կարող են ստորագրել նաև հանձնաժողովի մյուս անդամները և (կամ) վստահված անձինք:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկների տվյալները (գրանցամատյանում արձանագրված)՝ ՏՀՀ-ն կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

Եթե հանձնաժողովի որևէ անդամ արձանագրության տվյալների վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նա ներկայացնում է իր գրավոր կարծիքը, որը կցվում է արձանագրությանը, իսկ իր ստորագրության կողքին այդ մասին կատարում է նշում:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 10 ժամ հետո:*

Յուրաքանչյուր արձանագրություն կազմվում է չորս օրինակից. մեկը փաթեթավորվում է հիմք համարվող փաստաթղթերի հետ, մեկ օրինակն անմիջապես փակցվում է տեղամասային կենտրոնում՝ հստակ տեսանելի տեղում, ընդ որում՝ համաձայն ընտրական

օրենսգրքի՝ դա պետք է արվի ոչ ուշ, քան կնիքը, գրանցամատյանը, արձանագրությունների մյուս երկու օրինակը և փաթեթավորված ընտրական փաստաթղթերի փաթեթը տեղամասային կենտրոնից հանելը, 2 օրինակը ներկայացվում է ՏարԸՀ:

Դիտորդի, վստահված անձի կամ հանձնաժողովի անդամի պահանջով նրան տրվում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրություններից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, այսինքն՝ մինչև հաջորդ օրը, առավոտյան ժամը 8-ը ՏարԸՀ են ներկայացվում.

- փաթեթավորված և կնքված ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը (քվեաթերթիկներ, ընտրացուցակներ, արձանագրությունների մեկական օրինակներ).
- քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկուական օրինակը.
 - գրանցամատյանը.
 - կնիքը.
 - քվեատուփը (քվեատուփերը).
 - քվեախցիկ(ներ)ը.
 - ընտրական գրականությունը:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն Քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկուական օրինակը, գրանցամատյանը և կնիքը ՏարԸՀ են տեղափոխվում կնքված և փաթեթավորված փաստաթղթերի ընդհանուր փաթեթից առանձին:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն Վստահված անձինք, դիտորդները և ՁԼՄ ներկայացուցիչները կարող են իրենց միջոցներով ուղեկցել ընտրական փաստաթղթերը ՏարԸՀ տեղափոխող ավտոմեքենան:



Ի՞նչ է արվում ՏարԸՀ-ում

➤ ՏարԸՀ-ում ստուգվում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը:

➤ ՏարԸՀ-ը համեմատում է կնիքի համարը ՏԸՀ-ի արձանագրության կնիքի համարի հետ, որից հետո ՏարԸՀ-ի գործավարության մատյանում կատարում է գրառում ՏԸՀ-ի կնիքի ստացման մասին և տրվում է ստացական:



ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն Չի բացառվում արձանագրություններում թվաբանական սխալների առկայությունը: Նման դեպքերում ՏԸՀ-ի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

Հ Ի Շ Ե Ք

Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում:

Ելակետային են համարվում այն տվյալները, որոնք ստացվել են ընտրողների ցուցակներում ստորագրությունների կամ քվեաթերթիկների հաշվարկման արդյունքում:



Ընտրական հանձնաժողովի անդամների պատասխանատվությունը

Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պետք է իմանան, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի

• **148-րդ հոդվածի համաձայն.**

Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, քվեատուփ հափշտակելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

• **152-րդ հոդվածի համաձայն.**

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

• **155-րդ հոդվածի համաձայն.**

Ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելը, ինչպես նաև կնիքի պահպանման համար սահմանված կարգը խախտելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

• **157-րդ հոդվածի համաձայն.**

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում եւ կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

նշվում է ընտրության անվանումը¹

նշվում է քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը

Արձանագրություն

_____ շրջան, _____ համայնք

թիվ _____ ընտրատարածքի թիվ _____/_____ ընտրական տեղամասում _____ ընտրության քվեարկության արդյունքների

նշվում է ընտրության անվանումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով տեղամասում քվեարկության արդյունքները, արձանագրում է

Վերահաշվարկի արդյունքում
ՏարԸՀ-ն արձանագրում է

	Ընտրողների թիվը (Ը)	Քվեարկության մասնակիցների թիվը (Մ)	(Ը)	(Մ)
Քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում	1	1		
Ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակում ²	2	2		
Հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ ցուցակում ²	3	3		
Ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակում ²	4	4		
Մտացիոնար բուժհաստատության ընտրողների լրացուցիչ ցուցակում ²	5	5		
Ընտրողների հիմնական ցուցակում	6	6		
Ընդհանուր թիվը (1-6 տողերի թվերի գումարը)				
Հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը				
Մարված (չօգտագործված) քվեաթերթիկների ընդհանուր թիվը (հավասար է չօգտագործված քվեաթերթիկների թվի և ոչ ճիշտ լրացված կամ վնասված և հետ տված քվեաթերթիկների թվերի գումարին)				
Անվավեր քվեաթերթիկների թիվը				

¹ Նշվում են «Հանրապետության Նախագահի» կամ «ԱԺ համամասնական ընտրակարգով» կամ «ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի» կամ «համայնքի ղեկավարի» կամ «համայնքի ավագանու անդամի» բառերը:
² Տողը նշվում է «Հանրապետության Նախագահի» և «ԱԺ համամասնական ընտրակարգով» ընտրությունների դեպքում:

Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը կամ կուսակցության անվանումը (լրացվում է ըստ քվեաթերթիկի հերթականության)	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	
	Վերահաշվարկի տվյալները	
1.		
2.		
3.		
4.		
5.		
Թեկնածուին, կուսակցությանը դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (տողը նշվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում)		
Քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեաթերթիկների թիվը		
Անճշտությունների գումարային չափը		

Արձանագրությունում տվյալները լրացվում են թվերով և տառերով

	Ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն	Ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Հանձնաժողովի նախագահ՝				
Նախագահի տեղակալ՝				
Քարտուղար՝				
Անդամներ՝				

Առարկության (հատուկ կարծիքի) համար

Կ.Տ.

Արձանագրությունը կազմվել է «___» _____ 20 թ., ժամը ___-ին:

ԼՐԱՅՆՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

_____ տարածքային ընտրական հանձնաժողովում արձանագրությունն ընդունվել է «___» _____ 20 թ., ժամը ___-ին:

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն

Վերահաշվարկ իրականացրած ՏարԸՀ անդամների կազմը

Ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն	Ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն

Կ.Տ.

Վերահաշվարկի արդյունքներն արձանագրվել են «___» _____ 20 թ., ժամը ___-ին:

